

ՀՅՈՒՅՑ ՀՈՊԱՓՈՎԿՈՄԱՅՏ
№ 75 ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 75

ԻՆՉՈՒ
ՄԵՐ ԿԱԹՆԱՏՈՒ
ՏԱՎԱՐԸ^Ը
ՔԻՉ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ Ե

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԿԱՌՏՎՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 1980

№ 75

ՀՅՈՒԽ ՀՈՂՔՈՂԿՈՄԵՏ

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ


№ 75

636.2.088.5

ԻՆՉՈՒԹ

ՄԵՐ ԿԱԹՆԱՏՈՒ
ՏԱՎԱՐՅ
ՔԻՉ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ Ե

A 4398



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵԵՐԵՎԱՆ - 1930

Հրատ. № 1206.

Գրառ. № 3087(բ) Պատ. № 237. Տիրաժ 5000

Պետհրատի 2-րդ տպարտն Յեղեանում

ԻՆՉՈ՞Ւ ՄԵՐ ԿԱԹՆԱՏՈՒ ՏԱՎԱՐԸ ՔԻՉ ԱՐԴՅՈՒ- ՆԱՎԵՏ Ե

Հայաստանում կաթն ստացվում ե զլիսա-
վորապես կովերից և մատակներից (եդ գոմեշ-
ներից), վորոնք միասին 246 հազար զլիսից
բաղկացած մի կաթնատու նախիր են կազմում:
Բայց այդ նախիրն իր չտփազանց ցածը կաթ-
նատվութիւնն պատճառով մեղ շատ քիչ կաթ-
նամթերքներ և տալիս: Ցեթե համեմատենք,
թե վորքան կաթ են տալիս կովերը մեզնում և
ուրիշ լերկրներում, կտեսնենք, վոր այդ տեսա-
կետից մենք շատ ենք յետ մնացել:

Այսպես, որինակ՝ մինչդեռ Դանիայում
զլուղացին իր մի կովից միջին հաշվով տարեկան
ստօնում ե 3000 կիլոգրամմ, իսկ Շվեյցարիա-
յում՝ 2500 կլտ. կաթ, մեր գլուղացին
տարեկան նույն միջին հաշվով ստանում ե մի-
միայն 600—650 կլտ., այսինքն համարյա 4—5
անգամ պակաս: Այսպիսի ցած արդյունավետու-
թյունը հետեանք ե այն աղքատիկ և կիսա-
քաղց վիճակի, վոր ունի մեր կաթնատու տա-

վարը գյուղական բաժան-բաժան և մանր՝ տընտեսության պայմաններում։

Մեր կաթնառու տավարի այսպիսի ցած արդյունավետության շնորհիվ աղջարնակությունն ել կաթնամթերքներով շատ ավելի պակաս ե մնվում, քան մնվում են ուրիշ լերկը ներում։

Այսպես՝ Հյուսիսալին Ամերիկակի Միացյալ Նահանգներում յուրաքանչյուր շունչ տարեկան գործ ե ածում 69,5 կլգ. միս, Անգլիայում՝ 54,4 կլգ., իսկ մեզ մոտ՝ 12 կլգ., արսինքն Ամերիկայում մի մարդն որտեսան համարյա այնքան միս ե գործածում, վորքան մեզ մոտ մի շարթում։

ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Ե ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼ

Այսպիսի աղջատիկ դրությունից դուրս գտու համար անհրաժեշտ ե, փոք մեր գյուղացին կաթնամթերքներ արտադրի վհչ միան իր անձնական կարիքների համար, ալի շուկայի համար, ինչպես այդ անում ե, որինուկ՝ Դանիայի կամ Ամերիկայի գյուղացին, այսինքն՝ պետք ե տնտեսությունն այնպես վերակառուցել, վորպեսզի նա խոշոր աղջանքալին տնտեսություն դառնա։

Միայն արգակիսի տնտեսությունը կօրող և
թե բավականաչափ մթերքներ տալ ազգաբնա-
կության սպառման համար և թե հումք (հում-
նյութ) մատակարարել մեր յերկրի արդիունա-
բերության դարդացման համար։ Բայց մանր
չքավորական տնտեսությունը վերակառուցելու
և կաթնամթերք արտադրող խոշոր ապրանքա-
վին տնտեսություն դարձնելու համար անհրա-
ժեշտ և միանալ և կազմել խոշոր կոլեկտիվ
տնտեսություն։

Բայց վորձնք են խոշոր տնտեսության ա-
ռավելությունները, կոլեկտիվ խոշոր տնտեսու-
թյան առավելությունն այն և, վոր 50 չքավո-
րական փոշիացած՝ տնտեսություններ փոխա-
նակ 50 տեղ ցրված մնալու, իրենց կաթնատու
անտառներով միանում և կազմում են մի խո-
շոր տնտեսություն, վորտեղ համայնացվում
են թե անտառները, թե գոմը և թե ինվեն-
տարը։ Այսպիսի խոշոր տնտեսություն հիմնելով,
վարտեղ դոյություն ունի ընդհանուր գոմ
100 – 200 գլուխ կաթնատու կովերով, սաեղծ-
վում և կաթնամթերքների արտադրություն,
կտսես՝ մի գործարան, վարտեղ մեքենաներ
հանդիսանում են կովերը։

Տնտեսության կազմակերպման այս ձևը
հնարավորություն և տալիս տավարը պահել ու-

ցիոնալ, կոլեկտիվ գոմի մեջ, մեքենայացման յինթարկել աշխատանքը, վորով մինիմումի կը-հասնի բանվորական ուժի ծախքը, և, վոր ամենագլխավորն ե, հնարավորություն ե ստեղծվում ռացիոնալ հիմունքների վրա գնել տավարի կերակրման գործը, վորով կապահովվի նաև նրա բարձր կաթնատվությունը, դրա հետ և կաթնամթերքների արդյունավետությունը։ Հասկանալի յէ, վոր փոշիացած (ցրված) տնտեսությունների ուժից վեր ե իրագործել այս բոլորը։

ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Կաթնատու տավար պահելիս ամենից ավելի ուշադրությունը պիտի դարձնել կանոնավոր կերակրելու խնդրին։ Հայտնի յե, վոր լավ կերակրելուց շատ կոթ ե ստացվում։ Իսկ լավ կերակրել՝ նշանակում ե կովին այնքան կերտալ, վոր կտան, վորովհետեւ յիթե կովը կուշտ չե, ապա նա չի կարող կերն արդյունավետ կերպով կաթ դարձնել։ Ավելի լավ ե թվով քիչ կովեր պահել, բայց նրանց ապահովել առատ կերով, քան հակառակը։ Կաթնատու կովի լավությունը վորոշելիս նկատի պիտի ունենալ նրա այն հատկությունը, թե վորքան ե տրված կերի մեծ մասը կաթի վերածում։ Հասկանալի յե, վոր լավ ե այն կովը, վորը արված կերն ա-

վելի մեծ չափով եւ կաթի վերածում։ Վորքան
մեծ փոք ունենա կովը և վորքան շատակեր լինի
նա, այնքան ավելի ձեռնտուլե։ Այդպատճառով
ավելի ձեռնտուլե մի կովից որական ստանալ
10 կլդ. կաթ, քան յերկու կովից 5-ական կլդ.,
կամ թե՝ ավելի ձեռնտուլ յե մի մատակից ո-
րական ստանալ 16 կլդ. կաթ, քան յերկու կո-
վից 8-ական կլդ.։ Ասում ենք ձեռնտուլ յե, վո-
րովինետե կովին տրված կերի մի մասն ե մի-
այն գործադրվում կաթի արտադրության վրա,
իսկ մյուս մասը ծախսվում ե կովի կյանքի
պահպանության վրա, ճիշտ այնպես, ինչպես
գործարանը բանեցնելու համար նախ վառելա-
նլութ են բանեցնում և ապա միայն հում նյութ
են գործադրում վերամշակության համար։

Յեզ ահա, կերի այն մասը, վոր կաթնա-
դործարանի, այսինքն կովի համար իբրև վառե-
լանլութ ե ծառայում, կոչվում ե կենսապահ
կեր. կերի այդ մասը շարժման մեջ դնելով կո-
վի բոլոր գործարանները (որդանները), այս-
ինքն՝ սիրաը, թոքերը, ստամոքսը, աղիքները և
այլն, միաժամանակ նաև անհրաժեշտ ջերմու-
թյուն ե տալիս կովին։ Իսկ կերի այն մասը,
վոր գործադրվում ե կաթ կազմելու վրա, կոչ-
վում ե արդյունավետ կեր։

Կովին տրվելիք կենսապահ կերի քանակը

կովի կենդանի քաշից և կախված; և վորքան շատ լինի կովի կենդանի քաշը, այնքան ավելի կենսապահ կեր պետք է տալ կովին։ Իսկ արդյունավետ կերի քանակը կախված է այն կաթի քանակից և վորակից, վոր տալիս և կովը։

Վորքան կովը շատ և յուղալի կաթ և տալիս, այնքան շատ կերի պահանջ և ունենում նա։ Կնշանակի կարճատու անասունին պիտի կերակրել նրա կենդանի բարի յեզ կարի բանակի համեմատ։

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ԿՈՎԻ ԿԵՐԱԲԱԺԻՆԸ ՆՐԱ ԿԵՆԴԱՆԻ ՔԱՇԻ ՑԵՎ ԿԱԹԻ ՔԱՆԱԿԻ ՀԱՄԵՄԱՏ

Թե ինչպիսի կարիք ունի կենդանին կենսապահ և արդյունավետ կերի, չտփվում և այսպես կոչված կերի միավորներով։

Կերի մեկ միավորն իր սննդարրության տեսակետից 1 կլդ. գարու ուժ ունի։ Կերի արդ միավորով են չտփում, թե զանազան կերեր սննդարար լինելու տեսակետից ինչպես են։

Ստորև բերված տախտակը ցուց է տալիս, թե զանազան կերերի վոր քանակն ե, վոր իր սննդարրության տեսակետից հավասար է կերի մեկ միավորին, այսինքն՝ 1 կլդ. գարում։

ԿԵՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	ՀԵՐԵՎԱՆ ՏՐԱՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ	ՎԵՐԱԿՐՈՒ- ՅԱԿԱՆ ՀԱՅԱ- ՏԱՆԻ ՏՐԱ- ՋԱԿԱՆ
Թուսալ	0,9	320
Դարի	1,0	65
Վարսակ	1,2	92
Թհիփ	1,2	130
Կերի բազուկ	10,0	35
Կարտոֆիլ	4,0	17
Յեղիպտացոր. սիլոս	3,0	30
Խոտ	2,5	105
Դարման	4,0	25
Բամբակի հունդի պա- տիճ	4,0	—
Կանոչ խոտ	5,0	70

Ամենից առաջ վորոշենք, թե կովու իր կյան-
քի պահպանության համար վնրքան կերի պա-
հանջ ունի:

Ներքեում բերված տախտակը ցույց է տա-
լիս, թե վնրքան կենդանի քաշը ունեցող կովին
ինչքան կենսապահ կեր պիտի տալ:

Կովի կենդանի քաշը կի- լոգրամմներով: Սկսած—մինչև	Կովի քաշը կիլոգրամմում ու դուրս կատարելու հարաբեկությունը (Կովը)	Կովի քաշը կիլոգրամմում ու դուրս կատարելու հարաբեկությունը (Կովը)
150—249	2,5	100
250—349	3,0	150
350—449	3,5	200
450—549	4,0	250

Կովի կենդանի քաշը գտնելու ձեվը.—Ցե-
թե այնպիսի կշեռք չկա, վորով կովին կարելի
լինի կշռել և քաշն իմանալ, այդ դեպքում կա-
րելի լե վորոշ չափերի միջոցով գտնել կենդա-
նի քաշը։ Դրա համար կովի մարմի վրա վեր-
ցընում են 2 չափ։ Չափելիս կովին կանգնեց-
նում են ուղիղ տեղ։ Առաջին չափը մարմի
լերկարությունն ե, վորը գտնում են հետևյալ
կերպ։ մնդավի ամենաբարձր կետից մինչև պոչի
արժատը (վորտեղից պոչն սկսում ե շարժվել)
սանտիմետրերով։ Լերկը որդ չափը՝ կրծքի փաթն
ե առաջի վոտքերի յետեկց—չափում են թիակ-
ների յետեկց նույնպես սանտիմետրերով։ այդ
թվերը բազմապատկում են իրար հետ, ստաց-
ված թիվը բազմապատկում են 2-ով և հետո
բաժանում են 100 ի. ստացված թիվը կինի

կենդանի քաշը կիլոգրամմներով։ Որինակ, գիցուք մարմնի լերկարությունը դուքս լեկավ 90 սանտ., խոկ փաթը՝ 140 սմ. կենդանի քաշը կլինի $90 \times 140 = 12,600 \times 2 = 25,200 : 100 = 252$ կիլոգրամմ, ուրեմն կենդանի քաշը կլինի 252 կիլոգրամմ։ Հեշտության համար փոխանակ 25200-ը 100 ով բաժանելու, լերկու ստորակետով բաժանում ենք աշխ ձախ կողմը, վորով հարյուր անգամ կփոքրանա, այսպես՝ $252,00 = 252$ ։

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԵՐ

Բացի կենսապահ կերից կովին պիտի արդյունավետ կեր տալ՝ կաթ պատրաստելու համար. մենք արդեն վերևում առաջինք, վոր արդյունավետ կերի քանակը կախված է կաթի քանակից և լուղարիստյունից։

Սրդյունավետ կերի քանակը վորոշելու համար պիտի զեկավարվել հետեւալով։—

Կաթ կազմելու համար կենսապահ կերին ավելանում են՝

1. Յեթե կաթը լուղարի լե ($մոտ 3^0/_0$ լուղ), լուրաքանչյուր 3,0 կլզր. կաթին՝ կերի 1 միավոր։

2. Յեթե կաթը թանձը ե ($մոտ 4^0/_0$ լուղ), լուրաքանչյուր 2,5 կլզր. կաթին՝ կերի 1 միավոր։

3. ՅԵԹԵ ԿԱԹԸ ՉԱՄ Ե ԾԱՆՃՐ (5⁶/0 ԻՌԵՂ),
ԻՌԵՐԱՔԱՆՀԽՈՒՐ Զ ԿԼԳԸ. ԿԱԹԻՆ՝ ԿԵՐԻ 1 ՄԻԱՎՈՐ:

Ալժմ գիտենալով, թե ի՞նչպէս պետք ե վո-
րոշել կովին անհրաժեշտ կերի միավորների
ընդհանուր քանակը, անհրաժեշտ ե նաև հաշ-
վել, թե վորքան սպիտակուց ե պետք կովին,
վորովհետև սպիտակուցը, վոր պարունակվում ե
կաթի մեջ, շատ մննդարար և արժեքավոր նյութ
ե։ Սպիտակուցը կովին պիտի տալ այն հաշվով,
վոր ամեն մի կիլոգրամմ կաթին ընկնի 50
գրամմ։ Սպիտակուցով հատկապես հարուստ են
ուժեղ կերերը, մանավանդ քուսպը, իսկ աղ-
քատ ե ծղոտը (տես տախտակը 5-րդ եջում)։
Կերի մեջ լեզած սպիտակուցից կովը կաթի սպի-
տակուց ե պատրաստում։ Այդ պատճառով կո-
վին անհրաժեշտ կերի միավորների ընդհա-
նուր քանակը վորոշելիս պետք ե կերարաժինն
ապահովել համապատասխան քանակի սպիտա-
կուցով, վորովհետև կերարաժինն այնպես կա-
րելի լե կազմել, վոր թեև կերի միավորների
ընդհանուր թիվը պահպանված կլինի, բայց
սպիտակուցը կպակասի. այս դեպքում կովը
շատ կաթ չի տա, մինչդեռ ամեն բան հաջող
կանցնի, լեթե կենսապահ և արդյունավետ կե-
րերի հետ կովին տրվի սպիտակուցի այն քա-
նակը, վոր անհրաժեշտ ե։

ԿՈՎԻՆ ԶԱՆԱԶԱՆ ԿԵՐԵՐ ՊԻՏԻ ՏՄԼ

Խոչպես մարդը չի կարող բավարարվել
միատեսակ կերակրով, այնպես ել կովը կարիք
ունի զանազան կերերի: Տարբեր տեսակի կե-
րերը, այսինքն կերերի խառնութեղը շատ լավ ե
աղդում կովի կաթնատվության վրա, և կովին
ալդպիսի կերեր տալ ձեռնտորւ լե կովատի-
բոջը:

Այժմ մենք հեշտությամբ կարող ենք կովի
քաշի և կիթի քանակի համեմատ կերաբաժին
կազմել:

Յենթադրենք, թե մի կով, վորի կենդանի
քաշը 320 կլգր. ե, որական 10 կլգր. կաթ ե
տալիս:

Այդպիսի կովին որական պետք ե տալ՝

Կերի միավ.	Սպիտակուց
(կլգր.)	(գրամմ.)

Կենսապահ կեր 3,0 150

Արդյունավետ կեր – կաթ

կազմելու համար	4,0
----------------	-----

Բնդամենը	7,0
------------------	-----

Դիցուք տնտեսության մեջ կա խոտ, դար-
ման և կերի քաղուկ, իսկ դրսից հնարավոր ե
գնել՝

1 կլզր. գինը Կերի 1 միավորի
կոպեկներով գինը կոպեկ-
ներով

Քուսակ 8 7,2

Թեփ 7 8,4

Ցենթադրենք, թե տնտեսության մեջ լեռ-
դած կերերի պաշարով հնարավոր ե որական ճ-
կնդր. խոտ, և կլզր. դարման և 10 կլզր. կերի
բազուկ տալ կովին:

Ալդպիսի կերաբաժնի հետ մենք կովին տա-
լիս ենք կերի և միավոր և 270 գրամմ սպի-
տակուց, վոր լերենում ե հետեւյալ հաշվից:

Կերի միավոր Սպիտակուց
(գրամմերով)

**5 կլդ. խոտը պարու-
նակում ե 2 210**

**4 կլդ. դարմանը պա-
րունակում ե 1 25**

**10 կլդ. կերի բազուկը
պարունակում ե 1 35**

Ընդամենը 4 270

Մինչդեռ կովին մենք պետք ե տանք կերի
7 միավոր և 650 գրամմ սպիտակուց, այդ պատ-
ճառով կերի պակսորդը պետք ե գնել զբսից:
Գնովի կերերից, ինչպես տեսանք, ավելի ձեռն-

տու յե քուսապը, վորովիետե նրա կերի միավորն ավելի եժան և նստում, չնայելով, վոր նաթեփից թանգ ե, ալդ պատճառով պակսորդ կերը մենք կլրացնենք քուսալով. այժմ հարց ե ծագում, թե վհրքան քուսալ պիտի տանք. մենք արդեն դիտենք, վոր կերաբաժինը լրացնելու համար անհրաժեշտ ե նաև կերի 3 միավոր, իսկ ալդքան միավոր կտա մեզ 2,7 կլգը. քուսապը. ուրեմն, կովին տալով նաև 2,7 կլգը. քուսալ, մենք թե կերի միավորները կլրացնենք և թե սպիտակուցի անհրաժեշտ քանակը:

Ալսպիսով, ուրեմն, մենք կովին տված կլինենք՝

Խոտ 5 կլգը.

Դարձան 4 »

Կերի բազուկ . 10 »

Քուսալ 2,7 »

Այս կերաբաժինը և՛ եժան ե, և՛ կանոնավոր:

ԿԱԹՆԱՏՈՒ ՏԱՎԱՐԸ ՊԵՏՔ Ե ԼՈՒՍԱՎՈՐ ՇԵՆՔԵՐՈՒՄ ՊԱՀԵԼ

Մենք արդեն ասացինք, թե ինչպես պետք ե կերակրել կաթնատու տավարը, բայց միմիայն լով կերակրելով. յեթե տավարը պահվում ե վատ շենքերում, միևնույն ե, ողուտ չի ստացվի:

Զպետք ե մոռանալ, վոր կովը նույնպես,
ինչպես և մարդը, լույսի կարիք ե զգում, այդ
պատճառով տավարի տեղը լույս ոլիտի լինի:
Միաժամանակ գոմն ողափոխության հարմա-
րություն պիտի ունենա, վորպեսզի քամահո-
րության միջոցով կարելի լինի թարմացնել գո-
մի ծանր և կեղտոտ ողը: Գոմի ողը մաքրվում
ե նաև այն դեպքում, յերբ ամեն որ սրբում,
հեռացնում են գոմաղբը: Միենույն ժամանակ,
յերբ ամեն որ խողանակով սրբում, հեռացնում
են կովի մաշկի վրա նոտած փոշին ու աղբը,
ապա դրանով կովի արդյունավետությունը
բարձրանում ե: Արտասահմանում կաթնատու
կովի մարմինն ամեն շաբաթ լվանում են նույն-
իսկ սապոնով: Կաթնատու տավարի հաջող պահ-
պանության համար շատ լավ կլինի գոմի մեջ
մաքուր ջուր ունենալ և վոչ թե կովերը ջրել
գոմից դուրս՝ գետից բերած ջրով: Գոմը շատ
ցուրտ և կամ շատ տաք չպետք ե լինի:

Կաթնատու տավարի ռացիոնալ ձևով պա-
հելու վերաբերյալ վերևում բերված տարրական
կանոնները կիրառելու դեպքում կանոնավոր
կերակրելը դրական մեծ ազդեցություն կունե-
նա կովի կաթնատվության վրա, այսինքն կո-
վից լավ արդյունք կստացվի:

ԿԱԹՆԱՏՈՒ ՏԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ ԱՄԱՌԱՅԻՆ ԱՐՈՏԱՏԵ-
ՇՈՒՄ ՇՈՒՔԱՐԱՆ ՊԵՏՔ Ե ՇԻՆԵԼ

Ամառը, լերը կաթնատու տավարն արո-
տատեղում և գտնվում, պետք ե լերեք կողմից
պաշտպանված մի ընդհանուր շուքարան շինել,
վորապես կարելի լինի թե ցերեկվա շողից, թե
անձրեխց և թե անսպասի ձյունից պաշտպա-
նել կաթնատու տավարը:

Կաթնատու տավարի թե ամառային և թե
ձմեռային շենքերը պետք ե լինեն կոլեկտիվ,
վորովհետեւ այդպիսի շենքերում, — վորոնք կա-
ռացվում են մեծ թվով անասունների համար, —
հսարավոր ե նպաստավոր պայմաններ ստեղծել
կաթնատու տավարի ռացիոնալ և աշդրունավետ
պահպանման ու կերակրման համար:

Կաթնատու տավարի համար կոլեկտիվ գո-
մերը և շուքարանները, իրեն կանոն, պետք ե
գոմաղբը պահելու տեղ ունենան, վորովհետեւ
այդպիսի խոշոր ընդհանուր շենքերում ամեն
որ մեծ քանակությամբ գոմաղբը և միզանյութ
ե հավաքվում։ Այդ գոմաղբը և միզանյութը
հատուկ աեղերում պահելու և ժամանակին
նրանցով դաշտը, մարդագետիններն ու արոտա-
տեղինները պարարտացնելու միջոցով կարելի լի-
տվելացնել կոլեկտիվ անտեսության կերերի

պաշարը, և դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծել կաթնատու տավարն առատորեն կերակրելու համար:

Կաթնատնտեսության գործն այդպիսի կուլեկտիվ ձևով տանելու շնորհիվ չափազանց հետանում ե տեխնիկանամասնապահի աշխատանքը տնտեսությունը ղեկավարելու տեսակետից:

ԲԱՐՁՐ ԿԻԹ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՎԵՐ ՊԻՏԻ ԸՆՏՐԵԼ

Ամենքը գիտեն, վոր լավ տնտեսատերը վատ կով չի պահի, վորովհետև ինչքան ել առատ կերակրի նրան, միանույն ե, շատ քիչ ոգուտ կստանա նրանից:

Կաթնատու լավ կով կարելի է ձեռքբերել վոչթե շուկայում, այլ միայն կովեկտիվ տնտեսության մեջ—բարձր կիթ ունեցող կովերի հորթերը խնամելու մեծացնելու միջոցով:

Վորովհետև 100—200 գլուխ կաթնատու անասուններից կազմված նախրի մեջ միշտ ել կգտնվեն 10—20 կով, վորոնք աչքի կընկնեն իրենց բարձր կիթով, ուրեմն և այդ կովերի սերնդից պետք ե կովացուներ և ցուլացուներ պահել, խնամել:

Բայց կոլտնտեսության մեջ ով պետք է ի հայտ բերի, թե վո՞ր կովերը բարձր կիթ ունեն: Այս աշխատանքը, անշուշտ, պիտի կատա-

ըի կամ տեխնիկ-անասնապահը և կամ կոնտրոլ-ասսիստենտը:

Նրանք ամեն որ յուրաքանչյուր կովի կիթը չափում են, վորոշում են, թե քանի՞ յուղ ե պարունակում կաթը, հաշվում են, թե կովերից յուրաքանչյուր կովի կերի վրա ինչ ծախք է յեղել, և տարեվերջին հավաքած տվյալների հիման վրա ընտրում են ամենալավ կովերը և նրանցից ել կովացուները ու ցուլացուներ են պահում մեծացնում:

Ամերիկյան ֆերմերներն այս յեղանակով կարողացել են այնպիսի կովեր ունենալ, վորոնք տարեկան մինչեւ 1500 կիլոգրամմ կաթ են տալիս, իսկ նրանցից ծնված ցլիկը գնահատվում է 30.000 ռ. վոսկով:

Մեզ մոտ քիչ չեն աչքի ընկնող լավ կովերը, վորոնք պահպանման ու կերակրման աղքատիկ պայմանների մեջ լինելով, չեն կարողանում աչքի ընկնել իրենց կաթնատվությամբ:

Կոլտնաեսությունները ցեղական տնտեսությունների հետ միասին մեզ պիտի տան այնպիսի ցուլեր, վորոնք ստուգված են և սերվել են իրենց բարձր կաթնատվությամբ հայտնի դարձած կովերից: Այս ընտրությունն ել ավելի անհրաժեշտ ե, յեթե նկատի ունենանք, վոր վատ ցուլը 2-3 տորվա մեջ կարող ե փչացնել 150-200 դլմից կազմված նախիրը:

ԿԱԹՆԱՏՈՒՆԵՐԻ ԾՆԵԼԸ ՊԻՏԻ ՓՈԽԱԴՐԵԼ ԱՇՆԱՆՆ
ՈՒ ԶՄԵՌՈՅ

Արդյունավետ կաթնատնտեսություն կազմակերպելիս շատ մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, թե լեռը են ծնում կաթնատու անասունները։ Այն շրջաններում, վորակղթարման կաթի սպառման պայմանները նպաստավոր են, որինակ՝ քաղաքներում, արդյունաբերական պանրա-լուղագործական շրջաններում և այլն, ամենից ձեռնտու լե, վոր կաթնատու անասունները ձմեռը և աշնանը ծնեն։ Ցերք կովը աշնանը կամ վաղ ձմռանն ե ծնում, ավելի կաթ ե տալիս, քան լեռը ծնում ե գարնանը. բացի գրանից առաջին դեպքում կաթն ավելի լե գնահատվում, իսկ մյուս առավելությունն ել այն ե, վոր աշնան հորթերն արոտ դուրս դաշիս արդեն ամբակազմ են լինում։

ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ ՊԻՏԻ ԶԵՌՔ ԱՌՆԵԼ
ԿՈՎԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՍ

Հիվանդության առաջն առնեխն ավելի հեշտ ե, քան բժշկելը։ Այդ պատճառով պեսք ե շատ լուրջ ուշադրություն դարձնել այն նախազգուշական միջոցների վրա, վոր ձեռք են առնվում հիվանդությունների դեմ։

Հիվանդությունը կանխելու ամենապղիսամբ միջոցները հետեւալներն են՝

1. Հոգ տանելը վոր արոտառեզերը և ջրառեղիները լինեն բարեկարգ վիճակում:

2. Ստոկած անասունների գեշերը թաղելու համար ունենալ բոլորովին մեկուսացած տեղ:

3. Սկսված հիվանդության մասին անձինքու տեղեկացնել անամնաբուժին և կապ պահել նրա հետ:

Տավարը հիվանդություններից աղաւ պահելու գործում առանձնապես կարեոր գեր և խաղում հմուտ հոգիվը, վորն իրբե արթուն պահակ հետեւում և իր տագարին։ Պայքարը հիվանդությունների գեմ, վոր, անկասկած, հասարակական խոշոր գործ և հանդիսանում մեր գյուղում, պահանջում և իր վրա դարձնել գլուզի ամրող հասարակաբնության ուշադրությունը։

ՈՒՐ ՊԻՏԻ ԳՆԱ ԿԱԹՆԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ

Այն շրջաններում, վորտեղ կաթը թարմ վիճակում քաղաք տանելու հարմարություններ կան, կաթի այդովիսի սպառումն ամենից ավելի յե ձեռնառ կոլտնտեսությանը։

Իսկ այն շրջաններում, վորտեղ կաթը

թարմ վիճակում քաղաք տանելու հարմարություններ չկան, կոլտնտեսությունն իր կաթը տալով մոտակա պանիր-լուղ գործարանին, վորպանից և լուղ պատրաստեն, ինքը գործարանային մնացորդները և շիճուկը վերցնում ե խոզերին բտելու համար:

Այսպիսով՝ կոլտնտեսության կաթնամթերքների սպառման գործն ավելի ձեռնտու յե կազմակերպել կաթնատնտեսական կոոպերացիայի միջոցով։

Պարզ ե, վոր չքավորական առանձին տընտեսությունները, բավականաշափ կաթնալին հումք ունենալու դեպքում նույնիսկ, առանց կոոպերատիվ խոշոր կազմակերպությունների, ինչպես ե, որինատի, կաթնատնտեսական կոոպերացիան, — չի կարող շահավետ կերպով կազմակերպել իր կաթնամթերքութիւնի վերամշակման և սպառման գործը և, բացի դրանից, չեն կարող ստեղծել այնպիսի նպաստավոր պայմաններ, վորոնց շնորհիվ կաթնատնտեսական կոլեկտիվ խոշոր միությունը հնարավորություն ունի ըստեղծելու այնպիսի շահավետ կաթնատնտեսություն, վորի արտադրանքների կազմակերպված սպառումն ապահովված ե կոոպերատիվ ցանցի միջոցով։

Մեր կաթնատնտեսությունն այս ձեռվ վե-

բակառուցելու դեպքում միայն մենք է վիճակի կլիս
նենք բավականաչափ կաթնասմթերքներ ստանալ
ազգաբնակության սննդի համար և անհբաժեշտ
քանակությամբ կաթնատնտեսական հումք ու-
նենալ թե՛ մեր լերկրի արդյունաբերության և
թե՛ հոմամիութենական եքսպորտի (արտա-
ծության) զարգացման համար:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039235

(0345)

A I
4398

ԳԻԱԸ 4 ԿՈԹ. Ա. (3/4 մամբ.)



Почему наш молочный скот мало доходен

Госиздат ССР Армении
Эривань—1930